ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«12» ապրիլի 2010թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն ՀՀ ժողովրդական նկարիչ Արա Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Պուշկինի 3 հասցեում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ **Աննա Ասատրյան**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի անդամ, պրոֆեսոր Արա Հարությունյանի ծանրակշիռ ավանդը Հայաստանի մոնումենտալ քանդակագործության ասպարեզում:

Այն ստեղծագործական ժառանգությունը, որ թողել է հայտնի արվեստագետը, դեռ շատ սերունդների և օտար հյուրերի աչք է շոյելու:

Ներկայացվում է Արա Հարությունյանի ստեղծագործությունների ոչ ամփոփ ցանկից ծաղկաքաղ:

- Կոմիտասի գերեզմանի արձանը, «Կոմիտաս» պանթեոնում
- Գեղարդակիր առյուծ, Գեղարդի ճանապարհին
- Երևանի գինու գործարանի հարթաքանդակներ՝ «Վահագն» և «Աղվեսն ու խաղողը»
- Սայաթ–Նովա աղբյուր–հուշարձանը
- «Վահագն Վիշապաքաղ»
- Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր
- «Էրեբունի» թանգարանի հարթաքանդակներ
- Մուսա լեռան հերոսամարտի հուշահամալիրը
- Գ. Սունդուկյանի հուշարձանը թատրոնի գլխավոր մուտքի մոտ
- Բանվորի արձանը և շատ այլ ստեղծագործություններ

Հարցը քննարկվել է Երևանի ավագանու կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի 2010թ. ապրիլի 1-ի նիստում և քվեարկության արդյունքում անցել միաձայն:

Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող Աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության,ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ՝ **Աննա Ասատրյան**